9. ԹԱԿԱՎՈՐՈՒ ԽԱՐՍ

Ժամանակով էրկու ախպեր կէլնեն. մեկ ախպոր յոթ խատ լաճ կէլնի, մեկ ախպոր յոթ խատ աղչիյ կէլնի:

Հըմեն օր յոթ լաճու խեր կուգյա յոթ աղչկան խոր կասի. - Պնարեով քե, յոթ քյաճու խեր:

Էն էլ ինոր կասի. - Աստծու պարին, յոթ քյեոփկու խեր:

Հըմեն օր ախչըկա խեր մոութ-մալուլ կուգյն տուն:

Պստիկ ախչիկ էն մեկ օր կուգյն, կասի. - Աղա՛, ընչի՞ հըմեն օր մոութ-մալուլ կուգյնս տուն:

Կասի. - Դե՛, գյրեող ծե տանի. հըմեն օր իմ ախպեր կուգյն կասի՝ պնարեով քյե, յոթ քյաճու խեր: Ինոր խամար էլ կմոթեմ:

Կասի. - Աղա՛, որ վատն էլ կուգյն կասի, տյուն էլ ասա՝ աստծու պնարին յոթ լաճու խեր, քյո յոթնի ճեռչ. իմ յոթնի պստիկ, թո գյնն էրթնն մեյ տեղ բազրգանութեն անեն: Հեմ ո՞րն շատ մալ կպիրի:

Էն մեկէլ օր կէրթն կնստի վեր ախպրին:

Ախպեր կուգյն, կասի. - Պնարեով քյե, յոթ քյաճու խեր:

Էն էլ ինոր կասի. - Աստծու պնարին, յոթ քյեոփկու խեր:

- Ցա՛, - կասի, - խեր էլնի, էսօր տյուն ընչի՞ կծծղաս:

- Է՛յ ախպե՛ր, քյո յոթնի ճեռչ. իմ յոթնի պստիկ, թո գյնն էրթան բնազրգանութեն անեն, մեյղըրն. հեմ ո՞րն շատ մալ կպիրի:

- Թող էրթնն, - կասի:

Կմտածի ինքն ուր կասի՝ իմուն լաճ, ինոր աղչիկ, էն ի՞նչ պիտի անի:

Էն մեկէլ օր պեռներ կկապեն, խաց կտնեն խետկեր, կխանեն ճամբեն:

Մեյ տեղ կէլնեն կինեն ճնամբնախ, կէրթնն:

Շատ կէրթնն, քյիչ կէրթնն. կխասնեն Մըսրա քյաղաքյ: Էն տեղ մեյ խատ բընեմ կուգյն ինոնց ոատ. կասի. - Տղեյնե՛ր. էկեքյ էրթանքյ զիկ աշկերտ:

Ախչիկն էլ ի մըտե լաճու ձևին:

Էն ինչ լաճն ի կասի. - Հե՛յ, ես կէրթնմ բնութեն կանեմ:

Էն ինչ աղչիյն ի. կասի. - Դե՛, իմ հնդ արա, ես կուգյնմ պնեմ:

Լաճ կթողնի կուգյն, աղչիյ կմնա բընի մոտ:

Տըսնըխինգյ օր կպնանի մոտ բընեն: Մեկ օր օղիս թնլած գյնխ. ծեռնեն կփոթընի,

կինի գյետին կկոտրի: Տիսնա մեչ իլին ակունք. ջավահիր կա: Ցսվաշըմ կպախի. էլըմ կբաշլայի օղիս թալել: Զում աշում ինոր մոտ կպանի. աշում գյործ կտատրի. ոպեն կասի. - Կնա. քյե խամար գործ կընդի. իմ գործ տնատրավ, ես էլ պետք չունեմ քյե:

Աղչիյն ի, կէլնի թողնի կէրթա մեյ խատ ուրիշ քյաղաքյըմ: Մեյ խա տաշտիմ մեչ խովիվըմ կտիսնա. կխանի ոսկիմ կուտա ինոր կասի. - Էնա ոպ մորթի, մենակ փոր տու զի, միսն թո մնա քյե:

Կառնի փոր, կտանի մեչիդին կթափի. սերսուփըմ կլվա. կկոռնի ուր գյլեռխ, ծամեր կտնի տակ, կէլնի Զանչիկըմ, կինի մեչ էն քյաղքյին:

Կբոռա. - Կազա՛ռած եմ, կազա՛ռած եմ:

Մեյ խա թակավորու տըրոնե կընցնի: Թակավոր կասի. - Պիրե՛քյ, արե՛քյ մե կազարած, էն օր մեր կազարած մեռեր ի:

Կէրթան կպիրեն. կանեն ուրենց կազարած:

Ծանց կուտան ինոր. կասեն. - Մեր կազեր պիտի տանես էնա գյեռլի ամի արածաս:

Աղչիյն հըմեն օր կտանի էն գյեռլի ամի կարածա: Մեկ օրմ էլ կտանի կազեր կթոնին գյեռլի ամի. կարածան. ինքյ Զանչկի կոտ կառնի տակ, ծամեր կքընքընի կմտնի գյեռլ կլոռկընա, թակավորու լաճ նստե փենջարեն կիշկա. տիսնա որ Զանչիկն կէլնի խրեղեն ծամով ճոռով սաչիկըմ:

Իրիկուն աղչիկ Զանչկե կոտ կկոռնի գյլեռխ, կառնի կազեր, կուգյան տուն:

Էն մեկէլ օր կառնի կազեր կէրթան արածալ, թակավորու լաճ կէրթան կնստի փենջարեն կիրիշկա, կասի խենքյ Զաչլիկ էլըմ ըսկուն կանի՞:

Կտիսնա՝ խա, Զանչիկ ուր կոտ կառնի, էլըմ կմտնի ճրի մեչ, կլոխկընա. կտիսնա, որ աղչիկ ի:

Էրկ օր, իրեքյ օր ըսկընան որ կտիսնա, մեկ օր կէրթան մոտ ուր մեր:

- Մարե՛, - կասի, - տյու զի կփսկե՞ս:

- Խա, - կասի, - որ քյո բանթանի կնիկ կընտս, քյե կփսսկենքյ:

Կասի. - Մարե՛, քյե պանմ ասեմ, չծրծղաս վեր զիկ, մեր Զանչիկ կազարած աղչիկ ի, որ ըսկուն էլնի, ես կուզեմ ինոր առնել:

- Էհ բալամ, վազն արե, Զանչիկ լաճ ի. էն ի՞նչ աղչիկ ի:

Լաճ ծեն կկտրի: Հըմեն օր կէլնի կնստի փենջարեն, Զանչկի արածներ կտիսնա:

Զանչկե էոթեն կրակի պես կինի թակավորու լաճու սրտի մեչ, չկանա խանե ինոր լաճ աղչիկ էլնել:

Մեկ օր էլըմ կէլնի կէրթան մոտ մեր:

Կասի. - Իլլանհ, բիլա՛քյ, մարե՛, Զանչիկ աղչի՞կ ի որ աղչիկ, ես էն կառնեմ:

Մեր կասի. - Որդի՛, որ ըսկուն ի, իրիկուն տեղ իսկի մեյ տեղ, փունջըմ ծաղիկ տիր քյո պանցի վերեն, մեկ ինոր պանցին, առատուն էլի տես. թե որ ինոր պանցի վիրվին կթոռոմի, ախչիկ ի, թե որ չէ՝ վազն արե մոտեն:

Լաճն ի, կաչքի, չում իրիկուն Զանչիկ կուգյան:

Իրիկուն քնելու գյանխ թակավորու լաճ կէրթան կասի. - Զանչիկ, տյու պիտի էսա կիշեր իմ էօդեն քնես:

Զաչլիկ կասի. - Ջանը՛մ, ես խանրանմ Զանչիկ. տյու թակավրում լաճ, ես ինչըխ քյո էօդեն կքնեմ:

- Զէ՛, - կասի, - պիտի գյանս:

- Է՛հ, որ տյու զոռես, կու գյանմ:

Կտանի կազեր կտեղավորի. կէրթա կմտնի փագնխ ոամ կթալի. կխասկընա. թե թակավրու լաճ ի՞նչ մտքի ի:

Կտիսնա, որ թակավրու լաճ կուզի ինոր լաճ ախչիկ էլնել խասկնալ:

Իրիկուն կէլնի կէրթն թակավորու լաճու էօդեն կքնեն:

Կես կիշըրին կակխի կտիսնա. որ ուր գյըլխու վիրվի ծաղիկն առեր ի թոռոմել, ուշիկըմ կտանի էն փունջ կտնի թակավորու լաճու գյլխու վիրև. թակավորու լաճու գյլխու վիրվի ծաղիկ կտնի վեր ուր գյըլխուն:

Թակավորու լաճ կակխի, կասի. - Զանչլիկ, ընչի՞ չես քյընե, հա իրար կտեպնես:

Կասի. - Տնաշե՛ն, ըսկուն որ չոր տեղմ եքյ պառկըցուցե զի, որ իմ կող կուշտ հըմեն կցավա. կիրիշկամ չը լիսանա էլ, էլնեմ, էրթամ իմ կազեր տանեմ արածամ:

Կասի. - Զանչլի՛կ, ույու կպառկեր չոր գյետին, քյո կոդ չէր ցավե. էտա կակուղ յաթղի մե՞չ քյո կող կցավա:

Կմիամտվի թակավորու լաճ, կքյնեն:

Առատուն թակավրու լաճ կակխի, կտիսնա Զաչլիկ էլե, կնացե

Մեր կուգյն մոտ լաճ. կասի. - Տղա՛, ծաղիկն ի՞նչ էլնվ:

Կասի. - Մարե՛, իմ գյլխու վիրվին թոռոմե, ինոր մնանցե զվարթ:

- Է՛, - կասի, - որ ըսկուն ի՝ լաճ ի Զանչլիկ:

Թակավորու լաճ կէլնի շոտըմ կվազի կէրթն փենջանրեն, կուզի Զանչլիկն տիսնալ:

Էլըմ Զաչլիկն կոտ կառնի տակ, ծամերն կքյընքյընի, կմտնի ճրի մեչ կլողկընա:

Կէլնի, կրակ կինի մեչ թակավորու լաճու սրտին: Ինչխ անի, ծեռ ճար չկա:

Շապաթըմ կնցնի վերեն, թակավորու լաճ մեկ օր էլ կէրթն կպնի մոր յախեն:

- Զէ՛, - կասի. - մարե՛, ես ճիշտ կիտեմ, որ Զաչլիկն աղչիկ ի:

Կասի. - Որ ըսկուն ի, կայնի թող իրիկուն գյա քյնի. ես կէրթամ կաչքեմ, խենքյ լաճ ի, թե՝ աղչիկ:

Իրիկուն Զանչլիկ կուգյն, կազեր կտանի կտեղավորի, կէրթն կպառկի կքնի:

Մեկ էլ կակխի, ոնմ կթնալի, կտիսնա, որ թակավորու կնիկ պիտի գյա, ինոր էուրեն խասկնա:

Կէլնի էրկու խատ կծիկ կկծկի, կտնի ոտկերաց մեչ, կքնի:

Կիշեր թակավորու կնիկ կուգյն. յավաշըմ տոտ կպանա, կմտնի ներս, ոտկերաց տեխեն ծեռ կպարզի. կծկներ կինի ձեռքյ, թողնի կէրթն:

Կէրթն լաճու էօդեն, լաճուն կասի թե. - Զանչլիկ լաճ ի:

Լաճ էլմ էլ ծեն կկտրի, ամաև սիրտ չի միամտվե, քանի որ հմեն օր կտիսնա. որ խորոտ ծամով աղչիկըմ կմտնի ճյուր կլոխկընա:

Թակավորու լաճ ինքն ուր կասի՝ որ ըսկուն ի, իմ մեր զի կխաբի, կայնի ես փորցեմ:

Կէլնի մեկ օր կասի. - Մարե՛, վղաև իփի էսօր ես Զանչլիկ կպիրեմ իմ էօդեն դանվնթ:

Կասի. - Էլը՞մ Զանչլկե անուն կուտաս:

- Զէ, մարե՛, ինոր խամար չէ, խեղճ տղա ի, թո գյան մեր տուն խաց ուտի:

Կիրակին թակավորու լաճ չի թողնի Զանչլիկ կազեր տանի արածալ, կասի. - Զանչլի՛կ, ասե, էսօր մեյտեղ խաց ուտենքյ:

- Աղե՛յ. - կասի:

Լաճ Զաչլկեն կառնի տանի ուր էօդեն. փլավ կլցեն, կպիրեն. կառնի փլավ սախ կտանի ճանգըմ անծակ մարգյրիտ կտնի փլավի իրես:

Ինքն ուր կասի. - Կայնի խենք, թե որ ախչիկ էլնի զաթի թըմախ կանի, - շուշոտ կժողվի, թե որ լաճ՝ զաթի ծեռն ինե չի տա:

Կպիրի մեյտեղ կնստեն, խաց կուտեն:

Զանչլիյն ի, կտիսնա մարգյրտներ ինն իրիսանց կուտա էն տեխ, ամաև տկանց կգյիղնա:

Թակավորու լաճ կասի. - Զանչլի՛կ, տյու ընչի՞ էրկու խա մարգյրիտ չես վերուցե քե:

Կասի. - Վերուցեմ ի՞նչ անեմ, ես խեղճ չաչլիկմ եմ:

Կվերուցի էրկու-իրեք խատ կուտա Զաչլըկեն, կասի. - Զանչլի՛կ, առ տար պախի, տիր քո կնգանն նշան:

- Դե՛, տու, խոսք չեմ կոտրե:

Խաց կուտեն. կպոծնեն. Զանչլիկն կէլնի կէրթն:

Ծապաթմ էրկու կնցնի վրեն. մեկ օր թակավրու լաճ կէրթն կասի. - Զանչլի՛կ, էսօր արե էրթանքյ ալմաստ սար ֆոանքյ:

Կէլնեն մեյ տեղ կէրթան: Զանչլիկ որ փըլփըլտան ալմաստներ կտիսնա, պերան կմնա պանց, ինն կէրթա, ինն ոտնով կզանի, ալմաստներ կթոուցի:

Ամա, թոմբընի էրկու փաչեքյ կապե, գյախտիկ խատ-խատըմ կթանի ներս, ուր էրկու փանչեքյ կլցի:

Իրիկուն մեյ տեղ կէրթան տուն. Զանչլիկ կէրթն ուր կազերաց տեղ:

Ալմաստներ կխանի տյուս, կլցի չանյմանջի մեչ, կտանի, կպախի:

Ծապաթմ էրկու էլ կնցնի վերեն. մեկ օր էլ թակավրու լաճ կասի. - Զանչլի՛կ. արե էրթանքյ մըոջնի սար ֆոալ:

Կէլնեն մեյտեղ կէրթան մըոջնի սար ֆոալ:

Էլմ էլ Զանչլիկ գյանխտիկ-մախտիկ ուր փանչեք իլին մըոջնն կանի: Զանչլիկ չանյմանջեմ էլ մըոջնն կշինի:

Ախար թակավորու լաճ, ի՞նչ կանի, ի՞նչ չանի. չկանա Զանչըլկե աղչիկ էլնել ըսպաթ անել:

Ժամանայըմ կընցընի, կասի. - Թակավոր ապրած, դե՛ իմ ինղ տու, ես կէրթամ տուն:

Թակավորու լաճ, որ կլսի, սիրտ կմըրմըռա, ինչխ Զանչլիկ պիտի էրթն ուր տուն: Ծեռ ճար չկա:

Թակավորն ի, ինոր իրեքյ տարվան ինղ կուտա, քիչմ էլ ադիե կուտա: Քիչմ էլ թակավորու կնիկ ադիե կուտա. պեռմ էլ էն տեղ կշինի ուր խամար կէրթն թակավորուն կասի. - Կխնթրեմ, զիկ երկուս խա ծի սու: Մեկ ես խեծնեմ, մեյն էլ մեյ կտոր պանն-մանն կա. պանոնամ վերեն, էրթամ:

Թակավորն ի սեյիսին կկանչի, կասի. - Էրկու խատ խորոտ ծի տու Զանչլկեն:

Զանչլիկ կառնի ծիանքյ, կպիրի պեռ կպատոնա. կկայնցուցի վեր տոաև, կէրթն թակավրուն մնաս պարեով կանի. կուգյա թակավորու կընկան ծեռ կպաքյի, թակավորու լաճն էլ զաթի խոստացե. որ մե ավուր ճանմբանխ էրթն խե Զանչլկեն:

Կէրթն կմտնի ուր քնած տեղ, էրկու մատ թղթի վերեն կգյրի. «Կուս էկա, կոա կնանցի. թակավրու լաճու բեղեր շոեցի»:

Թողնի կէլնի տյուս, կխեծնի ուր ծին. թակավորու լաճն էլ խետ, կէրթան. թակավորու լաճ կտառնա:

Ձաչլիկ կառնի ուր պեռ բարխանեն կէրթն ուր տուն: Կխասնի ուր խոր քյաղքյի տիմաց: Կէրթն կխասնի ծովու մոտ: Էնտեղ ինպյուրը կա, պեռ կառնի տակ, ծիանքյ կթոնին չնյիր: Ինքյ կնստի վեր ինպրին, խաց կուտի. ճյուր կխմի, կէլնի կէրթն ծովու ինի, կխանի գյելխուց Ձնչլկե կոտ, կթալի ծով, կասի՝ տյու չում մկա զի լազըմ իր, էլ մկա քյե պետք չունեմ:

Կմտնի ծով կլոխկընա: Ծամեր կսանդրի, կէլնի տյուս, կպառկի ծովինի, կքնի. չում ծիանքյ կշտանան:

Մեկ էլ կակխի, կտիսնա, որ իրիյվան շընքեր տառցեր են:

Ծոտրը կէլնի ուր պեռներ կպառնա. ծին կխեծնի, կէրթն ուր խոր տուսն վերեն կէճնի: Տոտ կտրվի. կուգյնն կպանուն. տիսնան, որ ուրենց աղչիկ:

Խեր կուգյն, աղչկան ճակատ կպաքյի, պեռներ կառնի տակ:

Ուր խորոխպոր լաճ, որ ուր խետ կնանցեր ի. կուրիսե. չկա:

Իրիկուն ի, աղչկան խորոխպեր կէլնի կուգյն մոտ, որ կլսի, աղչիյն իկեր ի:

Կասի. - Աղչի՛կ, ապա իմ լաճն ու՞ր է, խե քյե էկավ ինչխ էլավ:

Կասի. - Ես չուր Մ՚ըսրա քյաղաքյ սալախ կուտամ, էլ էնտեղ չեմ կիտե:

Մենք տառնանքյ վեր թակավորու լաճուն:

Թակավորու լաճ կէրթն տուն, ինն սիրտ կմըրմոա, կէլնի կէրթն ինոր քնած տեխ. կտիսնա քարիմ տրկեն թրդթիմ ճոթ կէրևա: Քար կկլորի էնտեխ, թուղթ կխանի տյուս, կկարդա սուչկա գյրածն:

Սիրտ կմըրմըոա, կառնի թուղթ, կէրթն մոտ ուր մեր:

Կասի. - Մարե՛, ես չասի՞, որ Ձնչլիկն աղչիկ էր. տես ի՞նչ ի գրի ուր քնելու տեղ:

Տղեն կասի. - Իսլանի, ես պիտի էրթամ ինոր ետև, ինոր կնտնեմ:

Կխեծնի ուր ծին, ինքեմ ոսկի կառնի խետ կէրթն:

Ծատ քիչ կէրթն, սալախ առնելով, կէճնի աղչկա տոան վերեն:

Տոտ կթվի, աղչկան խեր կուգյն տոտ կպանն:

Կասի. - Մ՚ըսանքը կուզե՞ս:

- Պարեո՛վ, խանզանր պարեո՛վ, ընչի՞ չէ:

Կառնի կէրթն էօդեն, աղչիկն էնտեղ նստուկ ի: Խետ, որ աչք կինի աղչկա. մեյմըկու կճանչընան:

Աղչիկ մեչ ուր մտաց կասի՝ աճա չում մկա փոթա, մկա էլ չեմ փոթնի:

Ամա ճանչվորութեն չեն իտա մեյ մըկու չում իրիկուն:

Իրիկուն թակավորու լաճ աղչկա խոր կասի. - Ես իկեր եմ քո աղչիկ կուզեմ:

Կտիսնա. որ լաճ խորոտ շաճել տղա ի, կասի. - Կուտա՛մ:

Աղչիկ չկանա ծեն խանե:

Էն մեկէլ օր խարսնընսի թաղարյուք կանի: Աղչիկ զաթի խոր քեռշկ-սարա ի շինե, թակավորու քեռշկ-սարի պես, ինչ կանդար մարթ կա կծողվեն քյաղքյի մեչ, թակավորու լաճ կտանեն փսակ:

Իրեքյ օր կիշեր-ցերեկ խարսնիս կանեն: Կմնա էնօր, որ պիտի տնեն մեյտրա: Աղչիկ ոնմ կթալի, կտիսնա, որ թակավորու լաճ միտք ունի ինոր սպանի, թոնի կիշրով փախի էրթն:

Կպերի մեյ տիկ ընուբ կլեցի կիսատ. պերան թեոլ կկնպի, չվան մէլ կկապի տրկի պերան, կառնի մտնի գյողվան իտև:

Իրիկուն փեսեն կպիրեն մոտ խարտ. կիշկա, որ դարբար մարդ չկա, մոտոխասնա տկեն, կտիսնա, որ խարսի խալվներ խագյուկ, գյեռ կայնե էնտեղ:

Կասի. - Տյու չի՞ր իմ խոր տան կուզարած:

Աղչիկ տկի չվան կքաշի, տկի պերան կկոռվի գյեռ կասի. - Խա՛:

- Տյու չի՞ր գյեղ կլոխկընիր:

Տկի գյլեռխ կքնշվի, կասի. - Խա՛:

- Տյու չի՞ր իմ պատի վերեն գյրիր իր «Կոռա էկա, կուս կնացի, թակավորու լանու ռեղեր շոիցի»:

Տկի գյլեռխ կկոռվի. - Խա՛, ես ի:

Թակավորու լանու շին կուգյն, խանջնել մեչքեն կքնշի, կզանի տկի սրտին մեչ, ընուր կչընռա տակ, կուց կուտա ընռի տեմ, կխմի, կտիսնա, որ շատ քաղցր ի. - Վա՞խ, - կանի, - որ քյո արուն ըսկընեմ քյաղցր էր, տյու՞ ինչ կանդնիր քյաղցր իր:

Խանջնել կտանոցուցի, որ զանի մեչ ուր սրտին, աղչիկ գյոռվան իտևեն կթոնի տյուս:

Մեռքեր կպոնի, կասի. - Քյե մի զանե, ես ըստա եմ: Նոր կուրախանան մեյմեկու վերեն: Մեկ ամիս էն մնալուց ետ, կառնի ուր կնիկ կէրթա ուր խոր տուն: